# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2024 թվականի N 1794 - Ա

## ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից «ԱՎԱՆՏԳԱՐԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ձեռք բերված 4 միավոր ներկայացուցչական տրանսպորտային միջոցներն ամրացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին՝ համաձայն NN 1 և 3 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին ամրացված 3 միավոր և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին ամրացված 1 միավոր տրանսպորտային միջոցները հետ վերցնել և օտարման նպատակով ամրացնել կոմիտեին՝ համաձայն NN 2 և 4 հավելվածների:

3. Կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության վարչապետի ու Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմերի ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածներում ներառված տրանսպորտային միջոցների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածներում ներառված տրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցումը (հաշվառումը)՝ դրանց հետ կապված ծախսերն իրականացնելով սույն որոշման NN 1, 2, 3 և 4 հավելվածների համաձայն ամրացվող մարմինների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ